«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը հասարակագիտության դասավանդման գործընթացում

Հեղինակ՝ Գոհար Թորոսյան

Խումբ/Առարկա՝ 4-րդ/Հասարակագիտություն

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3
Նպատակը..... 4
Խնդիրները..... 6
Բովանդակությունը..... 7
Եզրակացություն..... 13
Օգտագործված գրականության ցանկ..... 15

Ներածություն

<<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժության մեջ ընդունվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու հոգևոր, գեղագիտական, բարոյական, իմացական, մշակութային և էթնիկ արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Թվարկված արժեքներից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակի խնդրին ոչ մանկավարծական մոտեցում ցուցաբերել: Արժեհամակարգը լիակատար է բոլոր նշված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու <<արժեհամակարգ>> հասկացությունը խիստ ստույգ սահմանում չունի: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեհամակարգի ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը՝ մասնավորապես հասարակագիտության դերը:

Հայ իրականության մեջ կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել: Հայ դպրոցը եղել և մնում է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը, առաջընթացի գրավականը: Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել: Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի բարելավումը, միջազգային ասպարեզներում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը:

Մեր հարափոփոխ աշխարհում ինչքան էլ որ փոխվեն հասարակությունների մտածելակերպը, վերաբերմունքը, արժեհամակարգը ժամանակակից երևույթների ու գործընթացների հանդեպ, միևնույնն է երիտասարդ սերնդին պետք է դաստիարակել ազգային արժեքներով և հերոսական անցյալի օրինակներով:

Նպատակը

Կրթական տարբեր աստիճաններում սովորողների մոտ ձևավորել աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և վերաբերմունքն ինքն իր հետ, սեփական անձի նկատմամբ, իրականացվում են հասարակական դաստիարակման համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, հասարակական խմբեր և այլն) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանց, լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա՝ ձևավորելով ամբողջական արժեհամակարգ:

Արժեքային համակարգը արտահայտում է սովորողների համապատասխան գործողությունների վերաբերմունքի և վարքի միջոցով ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

- Գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, ավանդույթների, ազգային արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,
- Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,
- Հարգի ՀՀ խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,
- Կարևորի բարոյական չափանիշներն ու քրիստոնեական արժեքները, համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, բարեկիրթ, օրինապահ,
- Գիտակցի իր տեղն ու դիրքը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,
- Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,
- Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների նկատմամբ,

- Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,
- Դրսևորի աշխատասիրություն, հմտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,
- Մշտապես հոգ տանի առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Խնդիրները

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ գործունեության, ճանաչողության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր մատաղ սերնդի դաստիարակությունն ընթանում է տարբեր գործոնների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ժողովրդագրական, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով այս և այլ բազմաթիվ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համարխնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի, ինչպես նաև համամարդկային արժեքները: Այս բոլոր հանգամանքների ներգործության արդյունքում սովորողը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորում իբրև ստեղծագործական անհատականություն:

Բովանդակությունը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթության համակարգը գնալով անընդհատ ենթարկվում է փոփոխությունների, հասարակագիտության դասավանդման ընթացքում պետք է դիտարկվեն հետևյալները.

- Արդի աշխարհում բազմակարծության ընդունմամբ հանդերձ մրցակցող գաղափարախոսություններից հայեցի մտածելակերպի համար առավել ընդունելի աշխարհայացքային կողմնորոշիչների մշակում: Այդ կողմնորոշիչների հիման վրա արժեհամակարգի սովորողներ համար հասկանալի ձևակերպում, միաժամանակ հաշվի առնելով համամարդկային լավագույն արժեքներն ու մարդկային աշխարհայացքը: Կարևոր է, որ դպրոցում հասարակագիտության կրթության բովանդակությունը ուղղված լինի հայրենասիրության, քաղաքացիության դաստիարակմանը, հայոց ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ու հայ և համաշխարհային մշակութային արժեքների գնահատմանն ու պահպանմանը:
- Դպրոցում հասարակագիտության դասավանդման նոր կառուցվածքի ստեղծում, որը հնարավորություն կտա ստեղծել ուսուցման ազգային հիմքը, սովորողների մեջ ձևավորել մարդու և հասարակության մասին գիտելիքների ամբողջական համակարգը: Ընդ որում այդ գիտելիքների համակարգը կրթության որոշակի փուլում կունենա իր յուրահատկությունները՝ ելնելով սովորողների շահերից:
- Տեսական դրույթների զուգորդում սովորողների գործնական աշխատանքների և ընդհանրապես առօրյա կյանքի հետ: Այդ առումով կարևոր է որպեսզի հասարակագիտության ուսուցումը դառնա ուսուցում բնության մեջ, գործարար կազմակերպություններում, թանգարաններում և այլուր: Դպրոցն ինքը պետք է դառնա ժողովրդավարության մոդել, որպեսզի հասարակագիտական գիտելիքի և առկա իրավական մարդկային հարաբերությունների միջև անջրպետ չառաջանա: Հասարակագիտության ուսուցման ժամանակ պետք է արծածվի նաև հասարակական հարաբերություններիիդեալի խնդիրը և աշակերտը պետք է տեսնիիդեալների իրականանալի լինելը և հետամուտ լինի դրանց իրականացմանը: Քանի որ այսօր Հայաստանում ձևավորված չէ քաղաքացիական հասարակությունը, ցածր են մարդկանց իրավական գիտակցությունն ու քաղաքական մշակույթը, սովորողները պետք է հասարակագիտության ուսումնառության ընթացքում գիտակցեն իրենց դերը ապագա քաղաքացիական հասարակության

ձևավորման գործում: Հասարակագիտության ուսուցումը պետք է արժևորի անհատների և խմբերի ներդրումը ժողովրդավարության հաստատման գործընթացում:

- Հոգևոր առումով նկատելի որոշակի անկայունության և անորոշության պայմաններում հասարակագիտությունը պետք է հնարավորություն տա ժամանակակից մարդուն ի վիճակի լինել ընտրություն կատարելու իրեն առաջարկվող աշխատանքների, կենսակերպի հորձանուտում պետք է սովորողի մեջ զարգացնի խաղաղության մշակույթ՝ պահպանելով ազգային արժեքների համար պայքարելու ոգին ու պատրաստակամությունը:

Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափության մասին գիտելիքներ ունենալը, որոնց միջոցով մենք կարող ենք հասկանալ ու թույլատրել մեզշրջապատող աշխարհի մասին հիմնավոր պատկերացումները: Հասարակական գործընթացների մասին պատկերացումները, բազմազանությունը տարբեր նյութերի մասին, առկա տարակարծությունները, կարևոր նախապայման են սովորողների մոտ քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից:

Ժամանակակից աշխարհում էապես մեծացել է մարդկանց միջև առկա աշխատանքային հարաբերությունները, դրանցից բխող տարբերությունները: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է որպեսզի սովորողներն ունենան քննադատական մտածողություն: Վերջինս հնարավորություն է տալիս հասարակական երևույթները դիտարկել տարբեր կողմերից, կշռադատել դրանց դրական և բացասական ասպեկտների մասին և կայացնել հիմնավորված որոշումներ: Հասարակական գործընթացի բազմազանությունը նաև հնարավորություն է ստեղծում դրսևորելու ոչ ստանդարտ մոտեցումներ և դրանով իսկ զարգացնելու սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մեջ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Հասարակագիտություն առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս սովորելու մարդու ստեղծագործության մասին, ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կիրառել կոնկրետ իրավիճակներում:

Հասարակությունների զարգացման մակարդակը մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են ամբողջ կյանքի ընթացքում առաջնորդվում սովորելու պահանջով:

Հասարակագիտություն առարկայի դասավանդումը մեծ դեր ունի դպրոցում քաղաքացիական կրթության առաքելության իրականացման գործում:

Արժեքների վրա հիմնվող անձնային զարգացումը հասարակագիտություն առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է:

Վերջին տարիներին աճել է անձի արժեհամակարգի նկատմամբ գիտական հետաքրքրասիրությունը տարբեր բնագավառներում, ինչը պայմանավորված է տարաբնույթ տեղական ու համաշխարհային գործընթացներով:

Խոսքը վերաբերվում է հասարակության կենսագործունեության ոլորտներում համընդհանրությամբ պայմանավորված զարգացումներին, որոնք հանգեցնում են ազգային սոցիալական և մշակութային հանգամանքների փախողմանը, ներքին հասարակական խնդիրներին, ինչպես նաև տարբեր տեղեկութային ներգործություններին, որոնք հանգեցնում են միևնույն հասարակության ներսում անհամաչափ և տարամետ զարգացումներ: Ներկայում անձի արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կարևորում է հոգեբանական ճնշումների ներգործության բացասական հետևանքները կանխատեսելու և կանխելու տեսանկյունից:

Անձնային առանձնահատկությունների և արժեհամակարգի փոխպայմանավորվածության վերլուծության արդյունքում բացահայտել են համահարաբերակցային կապեր կյանքի արդյունավետության, ազատության, պատասխանատվության, անհատականության միջև: Այս կապերի ընդհանրությունը հնարավորություն է ընձեռնում եզրակացնելու, որ անձի արժեհամակարգի ձևավորման հնարավորությունը աստիճանաբար նվազում է, եթե հստակ են կյանքի նպատակները ու կյանքը իմաստավորելու գիտակցությունը:

Սովորողների արժեհամակարգի վրա ազդող գործոն է նաև տարիքային առանձնահատկությունը, երբ սովորողի արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային և կենսաբանական առանձնահատկությունների: Արտաքուստ սովորողի արժեքային համակարգը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում, և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղային բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ սովորողի

արժեհամակարգի ձևավորումը պետք է տեսնել աշակերտի ապրած յուրաքանչյուր օրվա ուրախության զգացումը, ապրելու ունակությունը: Սովորողների մեջ պակաս կարևոր չէ միջանձնային հարաբերությունների ձևավորումը, կամ իրենց համար երևելի, օրինակելի մարդկանց հետ շփումը (ծնողներ, ուսուցիչներ, ընկերներ և այլն): Հեղինակավոր մարդիկ կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական կազմակերպությունների անդամներ: Աշակերտները նրանցից կարող են ստանալ ինչպես արժեքների դրական մոդելներ, այնպես էլ բացասական: Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական հետևանքներ ունենալ սովորողի անձի արժեքային համակարգի վրա: Հետևաբար արժեքների դաստիարակման այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատությունում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը: Ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի միջոցով աշակերտի մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական գիտելիքներ և վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասինուսուցման մեթոդը ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակների: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանող օտար լեզուները, մասնավորապես ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և դաստիարակելու հսկայական ներուժ:

<<Հասարակագիտություն>> առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն ձևավորող, կշռադատող մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային և համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալական ակտիվ և պատասխանատու քաղաքացի:

Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում կարևոր դեր ունի ազգային մտածողությունը, ինչը խթանելու համար պետք է սովորողներին հանձնարարել հավաքել լրացուցիչ նյութեր: Ազգային մտածողության խթանման համար կարևոր է ինքնաճանաչողության հարցը:

Ինքնաճանաչողությունը պահանջում է երկխոսություն անցյալի հետ, որի ժամանակ անցյալը պետք է դառնա ներկայի մաս, ներկայի անցյալ, որովհետև ինքնության ցանկացած հարցազրույցը անպատկերացնելի է առանց պատմական շերտի:

Մեր օրերում հարկավոր է կրթել ու դաստիարակել ազգային մտածողությամբ ու արժեհամակարգով ձևավորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, միասնություն, համախմբվածություն, ընկերասիրություն և այլ արժեքներ: Բանավեճերի, հարցազրույցների, հանդիպումների միջոցով նրանց ցույց տալ թե ինչ է ազգային դիմագիծը, պետականամետ մտածելակերպը, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձն ու քաղաքացին: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր սովորող պետք է իմանա որպես հայ

ո՞րն է իր անելիքը այս երկրում: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է լինի արժեհամակարգի ձևավորումը՝ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդունակությունների հիմքի վրա:

Եզրակացություն

Ժամանակակից հասարակությունը պատմական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Ժամանակակից սովորողը այդ գործընթացների մասնակից է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճելու է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը, զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Հասարակագիտության դասընթացի և կրթության բովանդակության անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Արժեքային համակարգի բարելավումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային, համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է աշակերտի արժեհամակարգի ձևավորումը:

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է, և ցանկացած լավ ու բարի արժեքավոր բան հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին:

Կրթության առանցքը արժեհամակարգն է: Կարծում եմ, որ ցանկացած մարդու արժեհամակարգն այն է, ինչ ինքը համարում է արժեք: Ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակի սովորողներին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման և ապահովման համար ՀՀ հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցի գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական արժեքային համակարգի ձևավորմանը, դրանով նպաստելով պետության, ազգի ու անհատի փոխհարաբերության ապահովմանը: 21-րդ դարի քաղաքացին հասկանում է, որ հավակնում է ունենալ այն երկիրը, ուր կա լավ

կրթության համակարգ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը՝ կարողության-հմտության ձևավորումն է ապահովում, այլև ընդհանրապես պատասխան է տալիս սովորողների վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին: Դրանք են՝

- Լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, օժտված պատասխանատվությամբ, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,
- Դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես հասակակիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն:

Հասարակագիտության ուսուցչի առջև ծառանում է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ խնդիրը:

Որպեսզի հասարակագիտությունը որպես առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք եվրոպական առանցքային կեմպետենցիաները, բայց միշտ հիշելով, որ չի կարելի ստեղծել <<ամորֆ մարդ, գործարանային արդյունք>>, այլ հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում է 21-րդ դարում: Կրթական տիեզերական դաշտում մենք պետք է մեր տեսակետը կարողանանք հաստատել:

Օգտագործված գրականության ցանկ

- Ձեյնալյան Ն. Ա. <<Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում>>, Երևան 2017
- Մանասյան Ն. Հանրակրթության արժեքային համակարգը. <<Մանկավարժություն>> գիտամեթոդական վերլուծական ամսագիր 2004
- Հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնաարդյունքները և օրինակելի ծրագրերը
- <<Հայագիտությունը դպրոցում>> գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան 2017
- Յ. Բաբանակի <<Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում>>
- Մարդը և հասարակությունը ուսումնամեթոդական ձեռնարկ
- Համացանց